ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՅԱԿՈՎՍԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Մայակովսկի համայնք, գ. Մայակովսկի. Հեռ 060 28 50 13 E-mail mayakovski-1@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«05» նոյեմբերի 2018 թվական N 114-Ա

ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Ընտրական օրենսգրքի 104-րդ հոդվածի 5-րդ մասի ,2018 թվականի դեկտեմբերի 9-ին կայանալիք Ազգային ժողովի արտահերթ ընտրություններիանցկացման նպատակով , հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2018թվականի նոյեմբերի 2-ի 88-Ա որոշումը, ***որոշում եմ*** '

1. Սահմանել Մայակովսկի համայնքում տեղամասային կենտրոն.

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Մայակովսկի համայնքի միջնակարգ դպրոցի շենքում 'հասցեն գ.Մայակովսկի , 9-րդ փողոց, թիվ 2/4 հասցե :

2. Օրենքով սահմանված ժամկետում տեղեկացնել լիազոր մարմին ,տարածքային ընտրական հանձնաժողով և տեղամասային կենտրոնի տարածքը տիրապետողին :

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՀԱԳՆ ԲԱՐՍԵՂՅԱՆ

Գ.Մայակովսկի

2018թ.նոյեմբերի 5

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ՄԱՅԱԿՈՎՍԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Մայակովսկի համայնք, գ. Մայակովսկի . հեռ. 060285012 E-mail mayakovski-1@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
« 08» նոյեմբերի 2018 թվական N 115-Ա

ՄԱՅԱԿՈՎՍԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՔԱՐՈԶՉԱԿԱՆ ՊԱՍՏԱՌՆԵՐ ՓԱԿՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՎՃԱՐ ՏԵՂԵՐ ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Ընտրական օրենսգրքի 21-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներով, ***որոշում եմ***՝

1.Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2018 թվականի դեկտեմբերի 9-ին կայանալիք արտահերթ ընտրություններին համայնքի տարածքում քարոզչական պաստառ, քարոզչական տպագիր և այլ նյութեր փակցնելու համար առանձնացնել հետևյալ անվճար տեղերը

1) 3 -րդ փողոց 1/1 շինություն, 2 քմ տարածք:
2) 1-ին փողոց 20/2 շինություն , 2 քմ տարածք.
3) 7-րդ փողոց 2/3 շինություն , 2 քմ տարածք
4) 1-ին փողոց 8/3 շինություն ,2 քմ տարածք:

2.Սույն որոշման կատարման հսկողությունը դնել աշխատակազմի առաջին կարգի մասնագետ Գեղամ Ասատրյանի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՀԱԳՆ ԲԱՐՍԵՂՅԱՆ

2017թ.նոյեմբերի 8
գ. Մայակովսկի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՅԱԿՈՎՍԿԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

<< Կոտայքի մարզի Մայակովսկի համայնք, գ. Մայակովսկի. Հեռ 060 28 50 13 E-mail mayakovski-1@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<<14 >> նոյեմբերի 2018թվական N 116 -Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել Մայակովսկի համայնքի բնակիչ Միշա Վարազդատի Մկրտչյանի դիմումը , որով նա ցանկություն է հայտնել օրինակեցնել համասեփականության իրավունքով իրեն պատկանող 7-րդ փողոց թիվ 27 հասցեի տնամերձ հողամասում / ծածկագիր 07-043-023-002 / գտնվող բնակելի տան երկրորդ հարկում կառուցած ինքնակամ շինությունը :

Համայնքի կադաստրային քարտեզի և «Չափագրում և գեոդեզիա» ՍՊԸ-ի կողմից սահմանված կարգով հաստատված հատակագծից պարզվել է, որ քաղաքացիներ Միշա, Ալվարդ, Հրաչիկ և Վաչիկ Մկրտչյաններին համասեփականության իրավունքով պատկանող 7-րդ փողոց թիվ 27 հասցեի տնամերձ հողամասում գտնվող բնակելի տան երկրորդ հարկում 2017թվականին ինքնակամ կառուցվել է՝ Տարտ=20.06 քմ շինություն :

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 10,11,13-րդ կետերի պահանջներով և հաշվի առնելով այն հանգամանքը , որ քաղաքացիներ Միշա, Ալվարդ, Հրաչիկ և Վաչիկ Մկրտչյաններին համասեփականության իրավունքով պատկանող 7-րդ փողոց թիվ 27 հասցեի տնամերձ հողամասում գտնվող բնակելի տան երկրորդ հարկում ինքնակամ կառուցված շինության պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, շինությունները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ***որոշում եմ՝***

1. Քաղաքացիներ Միշա, Ալվարդ, Հրաչիկ և Վաչիկ Մկրտչյաններին համասեփականության իրավունքով պատկանող 7-րդ փողոց թիվ 27 հասցեի տնամերձ հողամասում գտնվող բնակելի տան երկրորդ հարկում կառուցված՝ Տարտ=20.06 քմ մակերեսներով շինությունը համարել օրինական:

2.Սահմանել, որ հողամասի սեփականատերը.

1) սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում Մայակովսկի համայնքի բյուջեի N 900105222229 հաշվին պետք է վճարի 42126 (քառասուներկու հազար հարյուր քսանվեց) Հայաստանի Հանրապետության դրամ օրինականացման վճարը.

2)իր միջոցների հաշվին պետք է վճարի կառույցի գույքային իրավունքների պետական գրանցման հետ կապված վճարներն ու տուրքերը:

3.Սահմանել, որ սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում օրինականացման համար սահմանված վճարումը չկատարելու դեպքում, նշված ինքնակամ կառույցը ենթակա չէ պետական գրանցման, իսկ սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՀԱԳՆ ԲԱՐՍԵՂՅԱՆ

Գ.Մայակովսկի
2018թ.նոյեմբերի 14